# Նոր կորոնավիրուս (COVID-19)

## Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
## Մաքրման և Ախտահանման Աղյուսակ

Այս ուղեցույն առաջարկում է խորհուրդներ՝ սենյակների կամ տարածքների մաքրման և ախտահանման համար: Այս ցուցումները կենտրոնացված են ոչ-առողջապահական հաստատությունների վրա, ինչպիսիք են դպրոցները, հաստատությունները, գրասենյակները, ցերեկային խնամքի կենտրոնները, բիզնեսները և համայնքային կենտրոնները, որտեղ մարդիկ չեն գիշերում: Այս ցուցումները նախատեսված չեն առողջապահական հաստատությունների, տնային տնտեսությունների կամ այլ վայրերի մաքրման համար, քանի որ դրանց համար արդեն կան հատուկ ուղեցույցներ http://ph.lacounty.gov/media/Coronavirus/

**Հավելյալ նկատառումներ**

a) Գործատուները պետք է մշակեն աշխատողների պաշտպանությանը վերաբերվող կանոնակարգ և տեղում վերապատրաստեն ամբողջ մաքրող անձնակազմին՝ նախքան մաքրման աշխատանքների առաջադրանքներ տալը: Ուսուցանումը պետք է ներառի, թե երբ է հարկավոր անձնական պաշտպանիչ միջոցներ (PPE) օգտագործել, ինչ պաշպանիչ միջոց է անհրաժեշտ, ինչպես ճիշտ հագնել, օգտագործել և հանել, և ինչպես ճիշտ թափել պաշտպանիչ միջոցները.[1]

b) Գործատուները պետք է վստահ լինեն, որ աշխատողները վերապատրաստված են աշխատավայրում օգտագործվող մաքրող քիմիական նյութերի վտանգների վերաբերյալ՝ համապատասխան OSHA- ի Վտանգների Հաղորդման ստանդարտի (29 CFR 1910.1200)[1]

c) Գործատուները պետք է բավարարեն OSHA- ի Արյան Մեջ Առաջացող Ախտածինների վերաբերյալ ստանդարտներին՝ (29 CFR 1910.1030), ներառյալ՝ վերահսկվող թափոնների և անձնական պաշտպանիչ միջոցների ճիշտ թափոնումը(29 CFR 1910.132):[1]

| | Առօրյա մաքրում | Ընդլայնված մաքրում | Խորը մաքրում |
|---|---|---|---|
| **Նկարագրություն** | Կատարվում են սովորական մաքրման աշխատանքներ: | Վարակիչ հիվանդությունների համավարակի կամ տեղային համաճարակի ընթացքում նոր հիվանդությունները կանխելու նպատակով, հաճախակի շփվող մակերեսների սովորական մաքրմանը **ԳՈՒՄԱՐԵԼ** նաև լրացուցիչ մաքրում և ախտահանում: | Սովորական և ընդլայնված մաքրմանը **ԳՈՒՄԱՐԵԼ** հատուկ մաքրում հատկապես այն տարածքներում, որոնք զբաղեցված են եղել կասկածվող կամ հաստատված դրական (+) վարակիչ հիվանդություն ունեցող անձի կողմից: |
| **Անձնական Պաշտպանիչ Միջոցներ (PPE)** | Քիմիական նյութեր օգտագործելիս, կրեք ձեռնոցներ ձեռքերը պաշտպանելու համար: | ՁեռնոցներինՆ **ԳՈՒՄԱՐԵԼ** նաև պաշտպանիչ ակնոցներ, եթե ցայտյունի վտանգ կա:[1] Անպայման օգտվեք Անվտանգության Կանոնների Թերթիկներից կամ հետևեք քիմիական նյութի պիտակի վրայի հրահանգներին: | Ձեռնոցներ, պաշտպանիչ ակնոցներ, դեմքի պաշտպանիչ վահան,խալաթներ/պաշտպանիչ հագուստ, ռեսպիրատորներ կրեք, եթե ցայտյունի վտանգ կա:[1] Անպայման օգտվեք Անվտանգության կանոնների թերթիկներից կամ հետևեք |

# Նոր կորոնավիրուս (COVID-19)

## Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
## Մաքրման և Ախտահանման Աղյուսակ

| | Առօրյա մաքրում | Ընդլայնված մաքրում | Խորը մաքրում |
|---|---|---|---|
| | | | քիմիական նյութի պիտակի վրայի հրահանգներին: |
| **Ախտահանիչ** | Օգտագործեք ամենօրյա մաքրման միջոցներ և ախտահանիչներ սովորական մակերեսների համար, ինչպիսիք են՝ հատակները, սեղանները, գրասեղանները, լվացարանները, զուգարանները և այլ կոշտ մակերեսով կահույքները և սարքավորումները: | Օգտագործեք սովորական ախտահանիչ միջոցներ կամ այլ հաստատված ախտահանիչներ[1] **ԳՈՒՄԱՐԱԾ** EPA-ի կողմից վավերացված ախտահանիչներ, որոնք հաստատված են հաճախակի շփվող մակերեսները բակտերիաներից և վիրուսներից ախտահանելու համար: | Օգտագործեք EPA- ի կողմից գրանցված ախտահանիչ, որն արդյունավետ է առաջացող պաթոգենների համար:[2] |
| **Մաքրման գործողություններ** | Կիրառեք հետևյալ ը:<br><br>a) Մաքրեք կոշտ մակերեսների փոշին<br>b) Խոնավ շորով մաքրեք կեղտոտ կոշտ մակերեսները<br>c) Խոնավ շորով մաքրեք հատակը<br>d) Փոշեծծիչով մաքրեք գորգերը | a) Կատարեք սովորական մաքրում **ԳՈՒՄԱՐԱԾ** ավելացրեք ոչ ծակոտկեն հաճախակի շփվող առարկաների / մակերեսների ախտահանման հաճախականությունը ամբողջ շենքի տարածքում:<br>b) Մաքրեք տաք ջրով և օճառով/լվացող հեղուկով: Առնվազն օրական ախտահանեք հաճախակի շփվող ոչ-ծակոտկեն առարկաները/մակերեսները<br>c) Մաքրեք ծակոտկեն մակերեսների վրայի տեսանելի բծերը/կեղտերը (օր.՝ գորգ, կահույք և վարագույրներ) համապատասխան | a) Փակեք հիվանդ մարդու կողմից զբաղեցրած տարածքը և, եթե հնարավոր է, սպասեք 24 ժամ այնտեղ մտնելու համար:<br>b) Բացեք դրսի դռներն ու պատուհանները հիվանդ մարդու կողմից զբաղեցված տարածքում՝ օդափոխության համար, եթե այդ հնարավոր է[1]<br>c) Իրականացրեք սովորական և ընդլայնված մաքրման գործողություններ ինչպես նաև, մանրակրկիտ մաքրեք և ախտահանեք բոլոր ոչ-ծակոտկեն մակերեսները, հատկապես՝ հաճախակի ձեռք տրվող մակերեսները (օր.՝ սեղան, չոր-մեջքով աթոռ, դռան բռնակ, լույսի |

| | Առօրյա մաքրում | Ընդլայնված մաքրում | Խորը մաքրում |
|---|---|---|---|
| | | նյութերով, որոնք կիրառելի են տվյալ առարկաների համար: | անջատիչ, բռնակ, համակարգիչ, ստեղնաշար, մկնիկ, հեռախոսներ) հիվանդ մարդու զբաղեցրած տարածքում/գրասենյակում:<br>d) Հիվանդ մարդու զբաղեցրած տարածքում/գրասենյակում ծակոտկեն մակերեսների դեպքում (գորգ, բազմոց, աթոռ, կարպետ և վարագույրներ) մաքրեք տեսանելի աղտոտվածությունը, մաքրեք համապատասխան նյութերով և ախտահանեք տվյալ նյութի համար նախատեսված հեղուկ/սփրեյ միջոցներով:<br>e) Խորը մաքրումն ու ախտահանումն ավարտելուց հետո, տարածքը կարող է նորից վերազբաղեցվել: |

1. CDC Coronavirus Disease 2019 (COVID-19) Environmental Cleaning and Disinfection Recommendations https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/community/organizations/cleaning-disinfection.html
2. EPA, List N: Disinfectants for Use Against SARS-CoV-2 https://www.epa.gov/pesticide-registration/list-n-disinfectants-use-against-sars-cov-2